



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME  
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Երրորդ բաժին

Մասնակի որոշում

Վարույթ ընդունելու մասին

Դիմում թիվ 37784/02

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի  
Հանրապետության<sup>1</sup>

Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանը (երրորդ բաժին) գանգատը քննեց 21 հոկտեմբերի 2004թ-ին հետևյալ կազմով՝

Պր. Գ. Ռեսս, նախագահ,

Պր. Ի. Կաբրալ Բարրետո,

Պր. Լ. Քաֆլիչ,

<sup>1</sup> Սույն որոշման թարգմանությունը ոչ պաշտոնական է և կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով: Թարգմանությունն ու մասնագիտական խմբագրությունը՝ «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության անդամ Արայիկ Ղազարյանի: © 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

Պր. Ռ. Տուրման

Պր. Բ. Ջուբանչիչ

Պր. Ջ. Յեդիգան

Տկն. Ա. Գյուլումյան, դատավորներ,

և Պր. Վ. Բերգեր, բաժնի քարտուղար,

Քննելով 2002թ. հոկտեմբերի 18-ին Դատարանին հանձնված վերոհիշյալ գանգատը՝ Դատարանը որոշեց՝

## **ՓԱՍՏԵՐԸ**

Դիմումատուն, Նոյան Տապան ՍՊԸ-ն, հանդիսանում է Հայկական մասնավոր լրատվական գործակալություն և հեռուստաընկերություն՝ գրանցված Երևանում: Դիմումատու ընկերությանը Դատարանում ներկայացնում է տկն. Անկե Շտոկը, որը Լոնդոնում գործող Քրդական մարդու իրավունքների ծրագրի իրավաբանն է:

### **Ա. Գործի հանգամանքները**

Գործի փաստերը, Դիմումատուի ներկայացրածի հիման վրա, կարելի է համառոտագրել հետևյալ կերպ:

#### **1. Հիմնական փաստերը**

*ա. Դիմումատու ընկերության ներգրավվելը  
հեռուստահեռարձակման գործունեության մեջ*

Դիմումատու ընկերությունը հիմնադրվել է 1991 թվականին և սկզբում գործում էր որպես լրատվական գործակալություն, որն ուներ իր տպարանը, թերթը և ինտերնետ ցանցը:

Դիմումատու ընկերությունը հայտնում է, որ 1997 թվականից բազմաթիվ առիթներով դիմել է իրավասու հանրային մարմիններին հեռարձակման արտոնագիր ստանալու համար, քանի որ նպատակ էր հետապնդում զբաղվել հեռուստատեսային հեռարձակման գործունեությամբ, բայց նրան շարունակ մերժել են:

1999 թվականի նոյեմբերի 1-ին դիմումատու ընկերությունը պայմանագիր կնքեց մեկ այլ մասնավոր ձեռնարկության, «Լոտուս» հեռուստաընկերության հետ (այսուհետև՝ Լոտուս), որպեսզի միասին

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

պատրաստեն դիմումատու ընկերության հեռուստաօրագրերը, որը նախատեսում էր Ռուսական TV6 հեռուստաընկերության հաղորդումների վերահեռարձակում և իր սեփական օրագրերի հեռարձակում, որոնք բաղկացած էին նորություններից, քաղաքական և տնտեսական վերլուծական հաղորդումներից և կազմում էին ամբողջ նյութի 25 տոկոսը: Ըստ համաձայնագրի պայմանների, Լոտուսը թույլատրում էր, որպեսզի դիմումատու ընկերությունը հեռարձակվեր 35 կապուղիով, որով հեռարձակվելու արտոնագիրը պատկանում էր Լոտուսին: Համաձայնագիրը ստորագրվեց երեք տարով (մինչև 2002 թվականի նոյեմբերի 1-ը), որը կարող էր չեղյալ համարվել կողմերի պահանջով, սակայն մինչև վեց ամիս նախորոք տեղեկացնելու պայմանով:

*բ. Օրենսդրական փոփոխությունները և դրա արդյունքում ձեռնարկված ժամանակավոր գործողությունները*

Մինչև օրենսդրական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան ռադիո- հեռուստատեսության բնագավառում 2000-2002 թվականներին, հեռարձակման արտոնագրերի կարգավորող մարմինը համարվում էր Կապի նախարարությունը:

Ռադիոյի և Հեռուստատեսության Մասին օրենքն ընդունվեց 2000 թվականի հոկտեմբերին (այսուհետև՝ Օրենք), որով սահմանվեց նոր մարմին. Հեռուստատեսության և Ռադիոյի Ազգային Հանձնաժողովը, որը ստանձնեց մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների լիցենզավորման և մոնիտորինգի կարգավորման գործառնությունները: Հանձնաժողովը հանրային մարմին էր՝ կազմված ինն անդամներից, որոնք նշանակվում էին Հայաստանի Նախագահի կողմից: Օրենքը նաև սահմանեց լիցենզավորման նոր գործընթաց, ըստ որի հեռարձակման արտոնագիրը տրվում էր մրցույթի հիման վրա, որն անցկացնում էր Հանձնաժողովը՝ ըստ ազատ հաճախությունների:

2001 թվականի ընթացքում գոյություն ունեցող բոլոր հեռուստահեռարձակման արտոնագրերը վերագրանցվեցին Հանձնաժողովի կողմից՝ մինչև նոր մրցույթների անցկացումը:

2001 թվականին Հանձնաժողովը որոշում ընդունեց հետաձգել 35 կապուղու մրցույթն անորոշ ժամանակով՝ մինչև նոր օրենքների ընդունումը, միաժամանակ թույլատրելով, որպեսզի Լոտուսը շարունակի իր գործունեությունը 35 կապուղով անորոշ ժամանակով՝ մինչև նշված մրցույթը կկայանար (Լոտուսի արտոնագրի ժամկետը սպառվում էր 2002 թվականի հունվարի 22-ին)

*գ. Դիմումատու ընկերության և Լոտուսի միջև վեճը*

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

2001 թվականի սեպտեմբերին Լոտուսը բողոքեց դիմումատու ընկերությանը հեռարձակվող նյութի որակի և բովանդակության վերաբերյալ և պահանջեց փոխել համաձայնագրի պայմանները: Մասնավորապես, Լոտուսը պահանջեց, որ դիմումատու ընկերությունը եթերից հանի մի շարք վերլուծական հաղորդումներ, այդ թվում նաև «հինգերորդ միկրոֆոն» հաղորդումը, որը հանրությանը հնարավորություն էր տալիս կապվել ուղիղ եթերով ստուդիայի հետ և կարծիքներ հայտնել պետական մարմինների և հանրային պաշտոնյաների վերաբերյալ: Դիմումատու ընկերությունը հրաժարվեց համաձայնվել այն փոփոխությունների հետ, որոնք առաջարկում էր Լոտուսը:

2001 թվականի սեպտեմբերի 14-ին Լոտուսը դիմեց «Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՊՓԲԸ պետական ձեռնարկությանը խնդրելով անջատել դիմումատու ընկերության հաղորդակը: Ըստ երևույթին Հայաստանի հեռուստատեսային ցանցը համաձայնվեց և դադարեցրեց էլեկտրական հոսանքի սնուցումը հաղորդակին:

Դիմումատու ընկերությունը հայտնում է, որ Լոտուսի կողմից միակողմանիորեն համաձայնագրի խզումը պայմանավորված էր կառավարության կողմից ճնշումներով: Այն այնուհետև հայտնում է, որ Լոտուսի ղեկավարությանը և փայտերերին վախեցրել և ահաբեկել են ազգային անվտանգության աշխատակիցները 2001 թվականի սեպտեմբերին և նրանց հրահանգվել էր կանգնեցնել դիմումատու ընկերության հեռուստահաղորդումների հեռարձակումը: 2001 թվականի դեկտեմբերի 14-ին դիմումատու ընկերությունը վնասի փոխհատուցման պահանջով դիմեց ՀՀ տնտեսական դատարան՝ փորձելով պարտադրել Լոտուսին վերսկսել հաղորդումների հեռարձակումը:

2002 թվականի փետրվարի 28-ին տնտեսական դատարանը մասնակիորեն բավարարեց դիմումատու ընկերության պահանջը՝ գտնելով, որ Լոտուսը խախտել էր պայմանագրի պայմանները: Դատարանը որոշեց դիմումատու ընկերությանը շնորհել վնասների և իրավաբանական ծախսերի փոխհատուցում 2,234,209 Հայկական դրամի չափով (մոտ 4,545 Եվրո) և հրահանգեց, որպեսզի Լոտուսը անմիջապես վերսկսի դիմումատուի հեռարձակումները: Այս որոշումը չբողոքարկվեց: Այն մտավ ուժի մեջ և դարձավ վերջնական: 2002 թվականի ապրիլի 5-ին դատարանը ընդունեց կատարողական թերթի մասին որոշում:

2002 թվականի ապրիլի 26-ին Երևանի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը սկսեց կատարողական վարույթը: Նույն օրը դատական ակտերի հարկադիր կատարման

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

ծառայությունը պահանջեց արգելանքի տակ վերցնել Լոտուսի գույքը և բանկային հաշիվը դատարանի որոշմամբ սահմանված փոխհատուցման չափով: Այնուհետև այն պահանջեց, որպեսզի Լոտուսը անմիջապես վերսկսի դիմումատու ընկերության հեռարձակումը:

2002 թվականի հունիսի 11-ին հարկադիր կատարման ծառայությունը կարճեց կատարողական վարույթը այն բանից հետո, երբ Լոտուսը վճարեց 1,044,000 հայկական դրամ (մոտ 2,125 եվրո): Այս որոշումը չբողոքարկվեց:

**2. 35 կապուղու համար անցկացված լիցենզավորման մրցույթը և դրա հետ կապված դատական վարույթը**

2002 թվականի փետրվարի 19-ին Հանձնաժողովը որոշեց հայտարարել լիցենզավորման մրցույթ մի շարք հաճախությունների համար, այդ թվում նաև 35 կապուղու համար: Հանձնաժողովը հրապարակեց հայտարարություն, որում սահմանեց 35 կապուղու մրցույթին մասնակցելու կարգը և տեղեկություն անհրաժեշտ փաստաթղթերի մասին: Պահանջվող տեղեկությունները վերաբերվում էին տեխնիկական սարքավորումներին, ֆինանսական միջոցներին, աշխատակազմին և դիմումատուի ծրագրային քաղաքականությանը:

Դիմումատու ընկերությունը և երկու այլ ընկերություններ, «Շողակաթ» և «Յան» հեռուստաընկերությունները ներկայացրեցին դիմումներ 35 կապուղու համար: Դիմումատու ընկերությունը հայտնում է, որ Շողակաթը մի ընկերություն էր, որը մեծ մասամբ պատրաստում էր եկեղեցական հաղորդումներ, մինչդեռ Յան հեռուստաընկերությունը մեծ մասամբ կենտրոնացված էր թեթև ժամանցի ծրագրերի վրա:

2002 թվականի ապրիլի 2-ին Հանձնաժողովն իր 36 որոշումով Շողակաթ հեռուստաընկերությանը հայտարարեց մրցույթի հաղթող 35 կապուղու համար: Որոշման մեջ նշված էր.

*»Համաձայն Օրենքի (համապատասխան հողվածների հիման վրա) և հաշվի առնելով Երևանի տարածքում հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման 35 կապուղու համար անցկացված լիցենզավորման մրցույթի արդյունքները, Հանձնաժողովը որոշեց (1) ճանաչել Շողակաթ հեռուստաընկերություն« ՍՊԸ-ին Երևանի տարածքում հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման 35 կապուղու համար անցկացված լիցենզավորման մրցույթի*

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

*հաղթող, և (2) Շողակաթ հեռուստաընկերություն ՍՊԸ-ին  
շնորհել հեռարձակման արտոնագիր:*

Այս որոշման համար ոչ մի պատճառ չտրամադրվեց և ոչ էլ Հանձնաժողովը որևէ գրավոր տեղեկություն ուղարկեց դիմումատու ընկերությանը հայտնելու, թե որոնք էին նրա ներկայացրած հայտի մերժման պատճառները: Դիմումատու ընկերությունը հայտնում է, որ Հանձնաժողովի կողմից իր դիմումի մերժումը պայմանավորված էր Կառավարության կողմից դիմումատու ընկերության անկախ ձայնը սահմանափակելու և լռեցնելու փորձը 2003 թվականի Նախագահական ընտրություններից առաջ: Այն այնուհետև պնդում է, որ իշխանամետ հեռուստաընկերություններին ավելի նպաստավոր պայմաններ ընձեռելը կառավարության կողմից կիրառվող ընհանուր պրակտիկա է, որպեսզի դրանով վերահսկի հեռարձակվող նյութը և մարի անկախ և այլախոհ ձայները Հայաստանում: Այն նաև ներկայացնում է, որ եթե իր ներկայացրած մրցութային փաթեթը պարունակում էր ամբողջ անհրաժեշտ ենթակառուցվածքը և սարքավորումները անմիջապես հեռարձակում կազմակերպելու համար, ապա մրցութի հաղթող Շողակաթ հեռուստաընկերությունը նույնիսկ մինչև սույն գանգատը Դատարան ներկայացնելու օրը, 2002 թվականի հոկտեմբերի 18-ը, դեռ հեռարձակում չէր կազմակերպել:

Չհստակեցված օրը, դիմումատու ընկերությունը դիմեց տնտեսական դատարան պնդելով, որ մրցութն անցկացվել էր օրենքի խախտումներով և պահանջելով մրցութի արդյունքները համարել առոչինչ: Մասնավորապես, դիմումատու ընկերությունը պնդում էր, որ հայտարարելով առանձին մրցութներ առանձին կապուղիների համար, փոխանակ անցկացնելու մեկ մրցութ բոլոր կապուղիների համար, Հանձնաժողովը դրանով սահմանափակել է դիմումատու ընկերության իրավունքը չզբաղեցրած որևէ այլ հաճախության արտոնագիր շահելու համար: Այն այնուհետև պնդում էր, որ Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկությունը չէր համապատասխանում այն տեղեկության հետ, որը պահանջվում էր Օրենքի 49 հոդվածով (տես համապատասխան ներպետական օրենքը ներքևում): Ավելին, Հանձնաժողովը օրենքով լիազորված չէր սահմանելու, թե ինչ տեղեկություն պետք է պարունակեր մրցութային փաթեթը: Դիմումատու ընկերությունը ներկայացնում է, որ Հանձնաժողովը չի հայտնել արտոնագիրը մերժելու պատճառների մասին, որը պահանջվում է Օրենքի 51 հոդվածով (տես ներպետական համապատասխան օրենքը ներքևում): Եվ վերջապես, դիմումատու ընկերությունը պնդում էր, որ ինքը պայմանագրից բխող իրավունք ուներ իր ծրագրերը հեռարձակելու 35 կապուղով մինչև

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

2002թ. նոյեմբերի 1-ը, որն ընդունել էր նաև տնտեսական դատարանը իր 2002թ. փետրվարի 28-ի որոշումով:

2002թ. մայիսի 24-ին տնտեսական դատարանը քննեց դիմումատու ընկերության հայցը: Դիմումատու ընկերության շահերը ներկայացնում էին երեք փաստաբաններ: Դատարանը որոշեց մերժել դիմումատու ընկերության պահանջը, գտնելով, որ Հանձնաժողովի՝ մեկ մրցույթ հայտարարելու փաստը առանձին մրցույթներ հայտարարելու փոխարեն չէր հակասում օրենքին: Դիմումատուին ոչինչ չէր արգելում, որպեսզի հայտեր ներկայացներ մյուս բոլոր մրցույթներին: Դատարանն այնուհետև գտավ, որ Հանձնաժողովը օրենքով լիազորված էր սահմանել մրցույթի ընթացակարգը և պայմանները և որ այն գործել էր օրենքի սահմաններում: Հանձնաժողովի կողմից հրապարակված մրցույթի պայմանների մասին հայտարարությունում, որը հետևեց մրցույթն անցկացնելու մասին 2002թ. փետրվարի 19-ի հայտարարությանը, ոչինչ չի հակասում Օրենքի 49 հոդվածի պահանջներին: Ինչ վերաբերվում է արտոնագիրը մերժելու պատճառները գրավոր տեղեկացնելու մասին, դատարանը գտավ, որ Հանձնաժողովը Շողակաթին ճանաչելով մրցույթի հաղթող, տեղեկացրել էր դիմումատու ընկերությանը այդ մասին 2002թ. ապրիլի 3-ի գրությամբ: Եզրափակելով, դատարանը նշեց, որ դիմումատու ընկերության պահանջը մինչև 2002թ. նոյեմբերի 1-ը հեռարձակվելու իրավունքի մասին անհիմն էր:

Դիմումատու ընկերությունը որոշումը բողոքարկեց ՀՀ Վճռաբեկ դատարան նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքերով: Վճռաբեկ բողոքը ստորագրված էր դիմումատու ընկերության ղեկավար, պարոն Տ.Յ. կողմից: Վճռաբեկ բողոքում դիմումատու ընկերությունը բարձրացրեց նույն փաստարկները, ինչ որ տնտեսական դատարանում, պնդելով, որ այդ դատարանը սխալ էր մեկնաբանել օրենքը և աղավաղել էր գործի փաստերը: Այն հղում կատարեց հեռարձակման և լիցենզավորման օրենքների բազմաթիվ դրույթներին, Սահմանադրության 5 և 8 հոդվածներին (տես համապատասխան ներպետական օրենքը), Կոնվենցիայի 6, 10 և 17 հոդվածներին: Դիմումատու ընկերությունը ամենայն մանրամասնությամբ փաստարկում էր, որ Հանձնաժողովն իր մրցույթային փաթեթն ուսումնասիրելով պարտավոր էր ընդունել հետևյալ որոշումներից մեկը. լիցենզիա տրամադրել կամ լիցենզիա տրամադրելը մերժելը: Հանձնաժողովի կողմից նման որոշում չընդունելու հանգամանքը ցույց էր տալիս, որ Հանձնաժողովն ընդհանրապես չէր ուսումնասիրել դիմումատու ընկերության մրցույթային փաթեթը: Ավելին, այդ հանգամանքը խանգարեց, որպեսզի դիմումատու ընկերությունը արդյունավետ կերպով

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

դատարաններում բողոքարկեր մրցույթի մասնակցության ձախողումը: Դիմումատու ընկերությունը նշված փաստարկների հետ միասին նաև պնդում էր, որ Վճռաբեկ դատարանի որոշ կետեր նույնությամբ կրկնում էին նման հարցի շուրջ բայց մեկ այլ՝ Մեկտեքս ՍՊԸ-ի գործով ընդունված որոշման տեքստը: Սա ցույց էր տալիս, որ դատարանը պատշաճ կերպով չէր քննել դիմումատու ընկերության բողոքը:

2002 թվականի հունիսի 28-ին Վճռաբեկ դատարանը հայտնեց դիմումատու ընկերությանը, որ վճռաբեկ բողոքը լսվելու է 2002թ. հուլիսի 12-ին ժ.11:00-ին: Պարոն Լ.Ս.-ն գրավոր հայտնեց Վճռաբեկ դատարանին, որ 2002թ. հուլիսի 12-ին ժ. 12:00-ին ինքը պետք է հանդես գար մեկ այլ դատական գործով: Երկու լսումները ժամանակային իմաստով համընկնելուց խուսափելու համար, պարոն Լ.Ս.-ը խնդրեց Վճռաբեկ դատարանին հայտնել, թե ճշգրիտ որ ժամին է լսվելու դիմումատու ընկերության գործը: Ըստ երևույթին, այս նամակին ոչ մի պատասխան չստացվեց:

2002թ. հուլիսի 12-ին ժ.11:00-ին պարոն Լ.Ս.-ը և Տ.Յ-ը եկան Վճռաբեկ դատարան: Ինչպես պարզվեց, դատարանը հերթագրել էր 85 գործ այդ օրվա համար, որտեղ բոլորին հայտարարվել էր դատարանում լինել մինչև ժամին: Լսումները սկսվեցին ժ. 11-ին: Ժամը 11:30-ին պարոն Լ.Ս.-ը հանդես եկավ միջնորդությամբ՝ խնդրելով նախագահող դատավորին հայտնել, թե երբ է լսվելու դիմումատու ընկերության գործը: Նախագահող դատավորը պատասխանեց, որ լսումները կսկսվեն »երբ որ դատարանը անհրաժեշտ համար«: Փաստաբանը կրկնեց իր խնդրանքը, բացատրելով, որ իր հարցը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքը ցանկանում է խուսափել, որպեսզի երկու լսումների ժամերը համընկնեն: Դրան հետևեց այն, որ նախագահող դատավորը հրահանգեց փաստաբանին դուրս հանել դատարանի դահլիճից՝ կարգապահությունը խախտելու համար:

Ժամը 16:00-ին Վճռաբեկ դատարանը սկսեց դիմումատու ընկերության գործի ուսումնասիրությունը: Հանձնաժողովին ներկայացնում էին երեք փաստաբաններ: Դիմումատու ընկերությունը ներկայացնում էր պարոն Տ.Յ-ն: Նախագահող դատավորը որոշեց անցկացնել գործի քննությունը՝ չնայած այն հանգամանքին, որ դիմումատու ընկերության իրավական ներկայացուցիչը բացակայում էր: Քննությունը շարունակվեց հինգ րոպե: Կողմերը ոչ մի փաստարկներ չներկայացրեցին ժամանակի սղության պատճառով:

Վճռաբեկ դատարանն ընդունեց իր որոշումը, որում այն սկզբում անդրադարձավ գործի հանգամանքներին և տնտեսական

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

դատարանի հիմնավորումներին, այնուհետև եզրափակեց՝ դիմումատու ընկերության բողոքը մերժելով և գտնելով, որ.

*բողոքում նշված պնդումները, ըստ որի տնտեսական դատարանը խախտել էր (համապատասխան իրավական ակտերը), անհիմն են, քանի որ Հանձնաժողովը, գործելով իր լիազորությունների շրջանակներում...սահմանել է մրցույթի կարգը...որը պարունակում է նորմեր մրցույթի անցկացման պայմանների, կարգի...մրցույթային փաթեթը ներկայացնելու, մրցույթի հաղթողին որոշելու մասին: 2002թ. փետրվարի 19-ին հանձնաժողովը...հայտարարեց առանձին մրցույթներ չգրադեցրած հաճախությունների վերաբերյալ և 2002թ. ապրիլի 2-ին իր 36 որոշումով «Շողակաթ» ՍՊԸ-ին ճանաչեց մրցույթի հաղթող, որի մասին տեղեկացրեց դիմումատու ընկերությանը իր՝ 2002 թվականի ապրիլի 3-ի նամակով:*

*Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը: Այս հոդվածը, այնուամենայնիվ, «չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիզենզավորում»: (10 հոդվածի վերաբերյալ) պնդումները նույնպես անհիմն են, քանի որ տնտեսական դատարանը չի խախտել [այս հոդվածի] պահանջները:*

*Պնդումները այն մասին, որ...տնտեսական դատարանը նույնիսկ հաշվի չէր առել [2002թ. փետրվարի 28-ի] որոշումը, ըստ որի դիմումատու ընկերությունը հեռարձակվելու իրավունք ուներ մինչև 2002թ. նոյեմբերի 1-ը, նույնպես անհիմն են...քանի որ այս վճիռը վերաբերվում է [դիմումատու ընկերության և Լոտուս ընկերության] միջև «վնասների փոխհատուցման և պայմանագրային պարտավորությունները կատարելու պահանջներից» բխող վեճին, որը ոչ մի կապ չունի տվյալ գործի հետ:*

*[Ինչ վերաբերվում է դիմումատու ընկերության պահանջը տնտեսական դատարանի կողմից ոչ պատշաճ կերպով քննելուն, ապա այս պնդումը նույնպես անհիմն է]...քանի որ [դատարանը] մանրամասնորեն, ամբողջական և օբյեկտիվ կերպով գնահատել է գործի վերաբերյալ բոլոր ապացույցները»*

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

**3. Լիցենզավորման հետագա մրցույթները 58, 63 և 56 կապուղիների համար:**

2002 թվականի հոկտեմբերի 18-ին Հանձնաժողովը հայտարարեց նոր մրցույթներ հինգ կապուղիների համար: Դիմումատու ընկերությունը հայտ ներկայացրեց 58 կապուղու համար:

2003թ. հուլիսի 18-ին Հանձնաժողովն իր 32-Ա որոշումով հայտարարեց 58 կապուղու մրցույթի հաղթողին: Դիմումատու ընկերության լիցենզիայի դիմումը նորից մերժվեց: Հանձնաժողովի որոշման տեքստը միատեսակ էր 2002 թվականի ապրիլի 2-ի որոշման տեքստի հետ:

2003 թվականի օգոստոսի 1-ին դիմումատու ընկերությունը գրավոր դիմեց Հանձնաժողովի նախագահին, հայտնելով, որ համաձայն Օրենքի 51 հոդվածի, »դիմումատուին պետք է գրավոր տեղեկացվի լիցենզիան մերժելու պատճառների մասին. որոշում ընդունելու օրվանից տասը օրվա ընթացքում«: Նամակում դիմումատու ընկերությունը խնդրում էր, որպեսզի Հանձնաժողովը ներկայացներ արտոնագիրը մերժելու պատճառները և հայտներ, թե Օրենքի 50 հոդվածով տրված չորս պատճառներից, որի հիմքով էր, որ իր մրցույթային փաթեթը չէր համարվել լավագույնը:

2003 թվականի օգոստոսի 11-ի նամակով Հանձնաժողովը հայտնեց դիմումատու ընկերությանը, որ մրցույթի հիմքով արտոնագիր տրամադրելիս Հանձնաժողովն իր որոշմանի մեջ պետք է միայն հայտնի, թե որ ընկերությունն է ճանաչվել լավագույն կազմակերպությունը և ում պետք է տալ կամ մերժել արտոնագիրը:

Զճշտված օրը Հանձնաժողովը հայտարարեց լիցենզավորման մրցույթներ 63 և 56 կապուղիների համար:

Դիմումատու ընկերությունը հայտեր ներկայացրեց երկու կապուղիների համար:

2003 թվականի հոկտեմբերի 13-ին և դեկտեմբերի 29-ին իր` 75-Ա և 99-Ա որոշումներով Հանձնաժողովը հայտարարեց մրցույթի հաղթողներին:

Դիմումատու ընկերությանը նորից մերժվեց արտոնագիր տրամադրել: Հանձնաժողովի որոշումները իրենց տեքստով միանման էին իր նախկին որոշումներին:

2004 թվականի մարտի 15-ին դիմումատու ընկերությունը պահանջեց Հանձնաժողովին ներկայացնել 75-Ա և 99-Ա որոշումների հիմնավորումները:

2004 թվականի մարտի 16-ի նամակով Հանձնաժողովը պատասխանեց` հղում կատարելով բազմաթիվ իրավական դրույթների և քվեարկության արդյունքների վրա. որպես իր որոշումների հիմնավորումները:

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

## **Բ. Ներպետական համապատասխան օրենքները**

### *1. Սահմանադրությունը (ընդունված 1995թ. հուլիսի 5-ին)*

Սահմանադրության 5 հոդվածը նշում է, որ պետական մարմինները և պաշտոնատար անձինք լիազորված են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար իրենք լիազորված են օրենսդրությամբ:

8 հոդվածը երաշխավորում է բոլորի սեփականությունն ունենալու իրավունքը: Պետությունը երաշխավորում է սեփականությունից օգտվելու և սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանվածության իրավունքը, ձեռնարկատիրությամբ զբաղվելու և տնտեսական մրցակցության ազատությունը:

24 հոդվածը երաշխավորում է բոլորին խոսքի ազատություն, այդ թվում նաև տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և հաղորդելու ազատությունը տեղեկատվական բոլոր միջոցներով և անկախ սահմաններից:

44 հոդվածի համաձայն, 24 հոդվածով երաշխավորված իրավունքները կարող են ենթարկվել այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ազգային անվտանգության և հանրային անվտանգության, հանրային կարգ ու կանոնի, այլոց առողջության և բարքերի, իրավունքների, ազատությունների և հեղինակության պաշտպանության համար:

### *2. Հեռուստատեսության և Ռադիոյի Օրենքը (ընդունվել է 2000թ. հոկտեմբերի 9-ին)*

Օրենքի 7 հոդվածը, որն արդեն տվյալ պահին ուժի մեջ էր, նշում է, որ ՀՀ-ում հեռուստատեսարձակման գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ է արտոնագիր:

20 հոդվածը տրամադրում է, որ յուրաքանչյուր իրավաբանական անձ կարող է ունենալ մեկ արտոնագիր միևնույն սփռման գոտու համար:

37 և 39 հոդվածների համաձայն, Հանձնաժողովն անկախ մարմին է հանրային հաստատության կարգավիճակով: Հանձնաժողովի գործառույթների մեջ են մտնում մասնավոր հեռուստակայանների արտոնագրումը և մոնիտորինգը: Այն կազմված է ինն անդամներից, որոնց նշանակում է Հայաստանի Նախագահը վեց տարի ժամկետով:

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

47 հոդվածը տրամադրում է, որ հեռուստահեռարձակման արտոնագիրը տրամադրվում է մրցույթի հիման վրա՝ ըստ հաճախությունների ցուցակի:

49 հոդվածի հիման վրա արտոնագրի համար ներկայացրած մրցույթային փաթեթը պետք է պարունակի տեղեկություններ ընկերության տեսակի և անվան, հեռարձակման տեսակի, ծրագրերի բովանդակության և մասնագիտացման վերաբերյալ, ծրագրերի լեզվի, սփռման տարածքի և բնակչության թվի, տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին, ինչպես նաև նամակ ֆինանսական միջոցների մասին, ծրագրերի հեռարձակման աղյուսակի, անձնակազմի մասնագիտական պատրաստվածության մասին:

50 հոդվածի համաձայն, Հանձնաժողովը հաղթողին որոշելիս պետք է հաշվի առնի ա) դիմումատու ընկերության սեփական արտադրանքի գերակայությունը, բ) ազգային ծրագրերի գերակայությունը գ) դիմումատու ընկերության տեխնիկական և ֆինանսական կարողությունները, դ) անձնակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանը

51 հոդվածը տրամադրում է, որ Հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով պատճառաբանի արտոնագիր տալու, արտոնագիրը մերժելու կամ արտոնագիրը անվավեր համարելու մասին իր որոշումները: Դիմումը մերժելու դեպքում այդ մասին դիմումատուին պետք է տեղեկացնել 10 օրվա ընթացքում: Արտոնագրի մերժումը կարելի է բողոքարկել դատարանում:

54 հոդվածի համաձայն, հեռարձակման արտոնագիրը տրամադրվում է յոթ տարի ժամկետով: Արտոնագրի ժամկետը սպառվելուց երկու ամիս առաջ, Հանձնաժողովը պետք է հայտարարի արտոնագրման մրցույթ չզբաղեցրած հաճախության համար: Եթե մեկ կապուղու համար ներկայացվել են երկու և ավելի հայտեր միևնույն որակական հատկանիշներով, ապա առավելությունը պետք է տրվի ա) այն ընկերությանը, որն իր գործունեության ընթացքում երբեք չի խախտել օրենքը, բ) ձեռնարկությունը, որն ունի ամենաքիչը երեք տարվա փորձ հեռուստածրագրեր պատրաստելու և հեռարձակելու ոլորտում:

### *3. «Հեռուստատեսության և Ռադիոյի Ազգային Հանձնաժողովի Կանոնակարգ» օրենքը*

Համաձայն Օրենքի 30 հոդվածի, Հանձնաժողովը սահմանում է հեռուստահաղորդումների հեռարձակման արտոնագրման մրցույթի ընթացակարգը, պայմանները և ժամանակային սահմանափակումները:

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

Համաձայն 63 և 67 հոդվածների, հեռարձակման արտանագրի համար ներկայացված մրցույթային փաթեթը ուսումնասիրելով, Հանձնաժողովը պետք է ընդունի հետևյալ որոշումները, ա) արտանագիր տալ, կամ բ) արտոնագիր տալը մերժելը: Արտոնագիր տալու կամ մերժելու մասին որոշման պատճեն պետք է տրամադրել դիմումատուին որոշում ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում:

4. *Հեռուստատեսության և Ռադիոյի ազգային հանձնաժողովի թիվ 4 որոշումը* »*Հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը հաստատելու մասին»*)

Համաձայն Որոշման 18 կետի, Հանձնաժողովը յուրաքանչյուր մրցույթային փաթեթ ուսումնասիրելուց հետո պետք է անցկացնի բաց քվեարկություն: Լավագույն կազմակերպությունը որոշվում է քվեարկության արդյունքների հիման վրա:

5. *Լիցենզավորման մասին ՀՀ օրենքը (ընդունված 2001թ. մայիսի 30-ին)*

Ըստ 10.8 հոդվածի, լիցենզավորման գործընթացը կարող է միայն ներառել այնպիսի պահանջներ, որոնք անհրաժեշտ են ազգային անվտանգության և հանրային անվտանգության, սոցիալական կարգ ու կանոնի, հանրային առողջության և բարքերի, ինչպես նաև այլ անձանց իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության համար: Եթե լիցենզավորման ընթացակարգում ընդգրկված են այնպիսի պահանջներ, որոնք օրենքով սահմանված չեն, ապա պետք է հղում կատարվի վերը նշված հիմքերից մեկի կամ մի քանիսի վրա: Այնպիսի պահանջ, որը նման հղում չի պարունակում, ինչպես նաև այլ սահմանափակումներ որոնք օրենքով սահմանված չեն, չունեն իրավաբանական ուժ:

6. *Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 1-ից)*

Ըստ Օրենսգրքի 225 հոդվածի, Վճռաբեկ դատարանը բողոքները քննում է նյութական և դատավարական իրավունքի խախտումների հիմքերով:

234 հոդվածը սահմանում է, որ Վճռաբեկ դատարանում գործի քննությունը սկսվում է վճռաբեկ դատարանի պալատի դատարանի զեկուցումով: Ձեկուցող դատավորը ներկայացնում է գործի հանգամանքները, գանգատարկվող դատավճռի էությունը և

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

զանգատում բարձրացված փաստարկները: Վճռաբեկ դատարանի դատավորներն իրավունք ունեն տալ հարցեր զեկուցող դատավորին: Բողոք բերած անձն իրավունք ունի ներկա գտնվել քննությանը: Եթե անհրաժեշտ են բացատրություններ, ապա բողոքարկող անձը և նյութ կողմերը կարող են հրավիրվել դատաքննությանը:

Համաձայն 235 և 236 հոդվածների, Վճռաբեկ դատարանը վերանայում է ստորադաս դատարանների վճիռները վճռաբեկ բողոքում նշված սահմաններում: Դատարանը կարող է բողոքը թողնել առանց բավարարման, կամ վճիռն ամբողջովին կամ դրա մի մասը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

## **ԳԱՆԳԱՏՆԵՐԸ**

1. Դիմումատու ընկերությունը զանգատվում է Կոնվենցիայի 6 հոդվածի հիմքով՝ մասնավորապես, որ 2002թ. հուլիսի 12-ի որոշումը բավարար չափով պատճառաբանված չէր, քանի որ դատարանը չի անդրադարձել բոլոր պնդումներին, որոնք բերվել էին վճռաբեկ բողոքում: Այն այնուհետև ներկայացնում է, որ իր փաստաբանին Վճռաբեկ դատարանի դահլիճից հեռացնելով դիմումատուն զրկվեց արդյունավետ իրավական ներկայացուցչություն ունենալու իրավունքից և խախտվեց կողմերի հավասարության սկզբունքը:

2. Դիմումատու ընկերությունը զանգատվում է Կոնվենցիայի 10 հոդվածի հիմքով, մասնավորապես, որ Հանձնաժողովի 2002թ. ապրիլի 2-ի որոշումը միջամտեց իր՝ ազատ արտահայտվելու իրավունքին: Նա պնդում է, որ Հանձնաժողովը չի գործել օրենքով սահմանված կարգով, քանի որ ըստ Լիցենզավորման մասին օրենքի 10.8 հոդվածի, չի տրամադրել պատճառաբանություն լիցենզավորման ընթացակարգի նոր պահանջներ սահմանելիս: Դիմումատու ընկերությունը այնուհետև ներկայացնում է, որ Հանձնաժողովը պարտավոր էր Օրենքի 50 և 51 հոդվածների ներքո արտոնագիր տրամադրել այն կազմակերպությանը, որն առաջարկել է լավագույն տեխնիկական և ծրագրային պայմանները, որոնք պահանջվում են ազգային մասնավոր հեռուստաընկերությունից, ինչպես նաև պատշաճ կերպով պատճառաբանի իր որոշումները: Իր որոշումների վերաբերյալ պատճառներ չտրամադրելով, Հանձնաժողովը չի գործել օրենքով սահմանված կարգով և այդպիսով դուրս է եկել ազգային մարմիններին տրվող հայեցողության իրավունքի սահմաններից: Ավելին, միջամտությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ և անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում: Դիմումատու

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

ընկերությունը այնուհետև ներկայացնում է, որ Հանձնաժողովի որոշումը հանգեցնում է շարունակական խախտումի, քանի որ դիմումատու ընկերությունը այդ ժամանակահատվածից սկսած հնարավորություն չի ունեցել հեռարձակվելու, որը պայմանավորված էր անօրինական մրցույթով: Ընկերությունը շարունակում է զրկված մնալ ՀՀ-ում հեռարձակման արտոնագիր ստանալու և այդպիսով հեռուստահեռարձակման բնագավառում ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունից:

3. Դիմումատու ընկերությունը գանգատվում է, որ Հանձնաժողովի անօրինական որոշումը պայմանավորված էր կառավարության՝ դիմումատուի ընկերության պատրաստած հեռարձակման նյութի նկատմամբ ունեցած անհանդուրժողականությամբ: Դիմումատու ընկերությունը ներկայացնում է, որ Հանձնաժողովի և կառավարության վերջնական նպատակը քաղաքական է իր բնույթով և դա բխում էր կառավարության նպատակներից, որոնք են անկախ ձեռնարկությունների ձայնը ճնշելը, և որ արտոնագրերն օգտագործվում են որպես միջոց լրատվամիջոցների միջոցով արտահայտվելու վրա գրաքննություն սահմանելու համար: Ներպետական դատավարության մասով, որոնք ավարտվեցին 2002 թվականի հուլիսի 12-ի որոշումով, Դիմումատուն հիմնվում է Կոնվենցիայի 14 և 6 հոդվածների վրա, իսկ Հանձնաժողովի՝ 2002 թվականի ապրիլի 2-ի որոշման մասով՝ 10-րդ հոդվածի վրա:

4. Դիմումատու ընկերությունը գանգատվում է Առաջին արձանագրության առաջին հոդվածի հիմքով, մասնավորապես՝ որ Հանձնաժողովի՝ 2002թ. ապրիլի 2-ի որոշումը անօրինական կերպով միջամտություն էր իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունքին: Նա նշում է, որ ինքն ուներ հեռարձակման արտոնագրից օգտվելու հնարավորություն: Քանի որ Հանձնաժողովը չկարողացավ օրինական կերպով որոշել 35 կապուղին զբաղեցնողի հարցը, ապա դա հանգեցրեց նրան, որ դիմումատու ընկերությունը շարունակում էր ունենալ 35 կապուղով իր ծրագրերը հեռարձակելու իրավունք մինչև 2002 թվականի նոյեմբերի 1-ը, որը նաև հաստատվել է Վճռաբեկ դատարանի 2002թ. փետրվարի 28-ի որոշումով:

5. Դիմումատու ընկերությունը գանգատվում է, որ Հանձնաժողովը մերժել է արտոնագիր տրամադրել հետագայում անցկացված մրցույթներում 58, 63 և 56 կապուղիների համար և հղում է կատարում Կոնվենցիայի 6, 10 և 14 հոդվածներին և առաջին արձանագրության առաջին հոդվածին: Դիմումատու ընկերությունը

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

ներկայացնում է, որ ինքը պետք է ազատված լինի ներպետական բոլոր միջոցները սպառելու պահանջից, քանի որ դրանք անարդյունավետ կլինեին, քանի որ նույն իրավական հարցերը վիճարկում էր ներպետական դատարաններում մեկ այլ հեռուստաընկերություն, Մելտեքս ՍՊԸ (տես Մելտեքս ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, համ. 37780/02), որոնք բոլորն էլ մերժվեցին ներպետական դատարանների կողմից մինչև 2004 թվականի ապրիլի 23-ը:

### **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

1. Դիմումատու ընկերությունը բողոքում է, որ Վճռաբեկ դատարանը բավարար կերպով չի պատճառաբանել իր 2002թ. հուլիսի 12-ի որոշումը: Այնուհետև, նա բողոքում է, որ իր փաստաբանը հեռացվել է դատական նիստերի դահլիճից: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որը, խնդրո առարկային վերաբերող մասով, ամրագրում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... իրավունք ունի գործի արդարացի ... դատաքննության ... անկախ ու անաչառ դատարանի կողմից»:

ա) Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի 2002թ. հուլիսի 12-ի որոշմանը, ապա Դատարանն հիշեցնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը դատարաններին պարտավորեցնում է հիմնավորել իրենց որոշումները, որը չի կարելի դիտել իբրև ցանկացած առաջ քաշված փաստարկին մանրամասն անդրադառնալու պահանջ: Այս հիմնավորելու պարտականության սահմանները կարող են տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից: Առավել կարելու է, ի թիվս այլի, հաշվի առնել նաև այն միջնորդությունների բազմազանությունը, որոնք կողմերը հարուցում են դատարանում, ինչպես նաև այն տարբերությունները, որոնք առկա են Պայմանավորվող կողմերի միջև՝ իրավական նորմերի, սովորութային կանոնների, իրավական մոտեցումների, դատական որոշումների հրապարակման եւ նախագծման առումով:

Ահա թե ինչու այն հարցը, թե արդյոք դատարանը չի կատարել հիմնավորումներ տալու պահանջը, պետք է լուծվի գործի հանգամանքների լույսի ներքո (*տես՝ Խիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի գործով 1994թ. դեկտեմբերի 9-ի որոշումը*, Սերիա Ա, N 303-Բ, էջ 2-30, կետ 27):

Քննվող գործով դիմումատու ընկերությունը, հանդես գալով իբրև հայցվոր, Տնտեսական դատարանին ուղղված իր հայցում ի հիմնավորումն իր՝ Տնտեսական դատարանի 2004թ. ապրիլի 2-ի

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

որոշման անօրինական լինելու հայտարարության, առաջ է քաշել մի շարք փաստարկներ: Տնտեսական դատարանը մանրամասն դրանք քննության է առել և գտել չհիմնավորված: Դիմումատու ընկերությունը նույն փաստարկները ներկայացրել է նյութական իրավունքի նորմերի եւ դատավարական իրավունքի խախտման առթիվ՝ Վճռաբեկ դատարանին ուղղված իր բողոքում: Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները, ինչպես նաեւ Տնտեսական դատարանի հետևությունները, գտել է, որ Տնտեսական դատարանը ճիշտ է մեկնաբանել օրենքը եւ եկել ճիշտ եզրահանգման: Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից՝ 2002թ. հուլիսի 12-ին կայացված որոշման հիմնավորմանը, ինչպես նաեւ այն հայեցողության սահմաններին, որը նման հարցերում թողնվում է ազգային դատարանների իրավասությանը, ապա Դատարանը գտնում է, որ որևէ կերպ չի փաստվում, որ Վճռաբեկ դատարանը խախտել է իր որոշման հիմնավորումները ներկայացնելու պահանջը:

Դատարանը հանգում է այն եզրակացության, որ զանգատի այս մասը ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետի համաձայն:

բ) Ինչ վերաբերում է դիմումատու ընկերության փաստաբանին դատական նիստերի դահլիճից դուրս անելուն, ապա Դատարանը գտնում է, որ ինքը հնարավորություն չունի գործում եղած նյութերով որոշելու զանգատի այս մասի ընդունելիության հարցը եւ որ, այսպիսով, Դատարանի Կանոնակարգի 54-րդ Կանոնի 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն, զանգատի տվյալ մասի վերաբերյալ անհրաժեշտ է ծանուցել պատասխանող պետությանը:

2. Դիմումատու ընկերությունը զանգատում նշում է, որ Հանձնաժողովի կողմից 2002թ. ապրիլի 2-ին կայացված որոշումն ապօրինի կերպով սահմանափակել է նրա արտահայտվելու ազատության իրավունքը, որն անրագրված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով եւ որը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիքը ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Դատարանը գտնում է, որ ինքն հնարավորություն չունի գործում եղած նյութերով որոշելու գանգատի այս մասի թույլատրելիության հարցը եւ որ, այսպիսով, Դատարանի Կանոնակարգի 54-րդ Կանոնի 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն, գանգատի տվյալ մասի վերաբերյալ անհրաժեշտ է ծանուցել պատասխանող պետությանը:

3. Դիմումատու ընկերությունը բողոքում է, որ տեղական դատարանների եւ Հանձնաժողովի՝ 35-րդ հաճախականության համար մրցույթի լիցենզավորման վերաբերյալ որոշումները կրել են քաղաքական բնույթ: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ 6-րդ եւ 10-րդ հոդվածների հետ համատեղ, որը, խնդրո առարկային վերաբերող մասով, ամրագրում է.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից եւ ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ ... քաղաքական կամ այլ համոզմունքից ...»:

Ինչ վերաբերում է տեղական դատարանների որոշումներին, ապա իր տրամադրության տակ եղած նյութերն ուսումնասիրելով, դատարանը գտնում է, որ որեւէ ապացույցով չի հիմնավորվում դիմումատուի առաջ քաշված մեղադրանքն այն մասին, որ տեղական դատարանները, դիմումատու ընկերության բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացքում, ենթարկվել են քաղաքական ազդեցության:

Դատարանը հանգում է այն եզրակացության, որ գանգատն, այսպիսով, ակնհայտորեն հիմնավորված չէ 35 հոդվածի 3-րդ կետի իմաստով եւ 35 հոդվածի 4-րդ կետի համաձայն, պետք է մերժվի:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի 2002թ. ապրիլի 2-ի որոշմանը, ապա Դատարանը հիշեցնում է, որ նա կարող է քննել միայն այնպիսի գանգատներ, որոնց վերաբերյալ սպառվել են իրավական պաշտպանության ներպետական միջոցները (*տես, օրինակ՝ Վալասինասն ընդդեմ Լիտվայի գործով 2000թ մարտի 14-ի որոշումը, N 44558/98*): Նա գտնում է, որ դիմումատու ընկերությունը որեւէ կերպ չի բարձրացրել այս հարցը տեղական դատարանների առջեւ:

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

Դատարանը հանգում է այն եզրակացության, դիմումատու ընկերությունը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 35 հոդվածի 1-ին կետով, եւ որ զանգատի այս մասը պետք է մերժվի Կոնվենցիայի 35 հոդվածի 4-րդ կետի համաձայն:

4. Դիմումատու ընկերությունը բողոքում է, որ Յանձնաժողովի 2002թ. ապրիլի 2-ի որոշմամբ ապօրինի կերպով սահմանափակվել է իր գույքից անարգել օգտվելու իրավունքը: Նա այնուհետեւ հայտարարում է, որ հեռարձակման իրավունք է ունեցել մինչեւ 2002թ. նոյեմբերի 1-ը: Նա վկայակոչում է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը, որը, խնդրո առարկային վերաբերող մասով, ամրագրում է.

»Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ պետության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով«.

ա) Դատարանը հիշեցնում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան հետ կանչելը կարող է որոշակի հանգամանքներում հանդիսանալ որեւէ մեկի կողմից իր գույքից անարգել օգտվելու իրավունքի սահմանափակում (*տես՝ Տրե Տրակտյուռեն ԱԲ ընդդեմ Շվեդիայի գործով 1989թ. հուլիսի 7-ի որոշումը, Սերիա Ա, N 159, կետ 53*): Տվյալ գործով, սակայն, դիմումատու ընկերությունը երբեք չի տիրապետել հեռարձակման լիցենզիայի, վերջինս իրեն ոչ տրվել է եւ ոչ էլ վերցվել: Յանձնաժողովի կողմից լիցենզիա տրամադրելու մերժումը չի կարող դիտվել իբրեւ դիմումատու ընկերության՝ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում:

Դատարանը հանգում է այն եզրակացության, որ զանգատն անհամատեղելի է *ratione materiae* հիմքով եւ պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

բ) Ինչ վերաբերում է դիմումատու ընկերության այն հայտարարությանը, որ մինչեւ 2002թ. նոյեմբերի 1-ը նա ունեցել է 35-րդ հաճախականությամբ հեռարձակում իրականացնելու իրավունք, ինչն իբրև թե ընդունվել է Տնտեսական դատարանի 2002թ. փետրվարի 28-ի որոշմամբ, ապա Դատարանը գտնում է, որ զանգատի այս մասը էականորեն ուղղված է մեկ այլ մասնավոր ընկերության՝ «Լոտուսի» դեմ: Տնտեսական դատարանը հրահանգել է 35-րդ հաճախականությանը տիրապետող «Լոտուսին» վերսկսել դիմումատու ընկերության հեռարձակումները: Սակայն, մինչեւ կատարողական վարույթի հարուցումը, «Լոտուսն» այլևս չէր տիրապետում հեռարձակման լիցենզիային, քանզի չէր մասնակցել

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

համապատասխան լիցենզիայի տրամադրման մրցույթին: Որևիցե կերպ 2002թ. փետրվարի 28-ի դատական որոշումը Հանձնաժողովին չի պարտավորեցնում հեռարձակման նպատակով դիմումատու ընկերությանը տրամադրել 35-րդ հաճախականությունը: Եվ ոչ էլ հարկադիր կատարողները որեւէ կերպ պատասխանատու են այն բանի համար, որ 2002թ. փետրվարի 28-ի որոշումը այս մասով չէր կարող ի կատար ածվել, քանզի այդ տեղի է ունեցել «Լոտուսի» գործողությունների հետեւանքով եւ ոչ թե՛ Հարկադիր կատարման վարչության, որը պատշաճ կերպով հարուցել եւ իրականացրել է կատարողական վարույթը:

Դատարանը հանգում է այն եզրակացության, որ զանգատն այս մասով ակնհայտորեն անհիմն է եւ պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

5. Դիմումատու ընկերությունը բողոքում է, որ Հանձնաժողովի կողմից հեռարձակման լիցենզիա տրամադրելու մերժումները, որ արվել են լիցենզիայի տրամադրման հետագա մրցույթներում, խախտել են Կոնվենցիայի՝ վերը հիշատակված 6-րդ, 10-րդ եւ 14-րդ հոդվածներով, ինչպես նաեւ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր իրավունքները:

Դատարանը հիշեցնում է իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները սպառած լինելու՝ վերը նշված կանոնը: Այնուհետեւ Դատարանը հիշեցնում է, որ այս կանոնը հիմնված է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում (որի հետ նա ամենասերտ կերպով առնչվում է) արտացոլված այն կանխավարկածի վրա, որ ներպետական համակարգում գոյություն ունի իրավական պաշտպանության արդյունավետ մատչելի միջոց՝ իրավունքի ենթադրվող խախտման առումով (*տես, ի թիվս այլ աղբյուրների՝ Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի գործով որոշումը (GC), N 25803/94, կետ 74, ՄԻԵԴ, 1999-V*): Այս կոնտեքստում 13-րդ հոդվածը երաշխավորում է արդյունավետ միջոց, այլ ոչ թե գործի հաղթական ելք (*տես՝ Արրաբալն ընդդեմ Իսպանիայի գործով 1991թ. հունվարի 15-ի որոշումը, N 25787/94*):

Քննվող գործով դիմումատուն հնարավորություն է ունեցել ազգային դատարաններում վիճարկելու լիցենզիա տրամադրելու հետագա մերժումները, ինչն ուղղակիորեն ամրագրված է Հեռուստատեսության եւ Ռադիոյի մասին Օրենքի 51-րդ հոդվածում: Այն փաստը, որ ազգային դատարանների կողմից նախկինում մերժվել են այնպիսի զանգատներ, որոնք նման են եղել նրանց, որոնք մտադիր է եղել ներկայացնելու դիմումատուն, մասնավորապես, մեկ այլ մասնավոր հեռուստաընկերության՝ «Մելտեքս» ՍՊԸ գործով, դեռեւս չի նշանակում, որ իրավական պաշտպանության այդ միջոցը հանդիսասացել է ոչ արդյունավետ, եւ

Նոյան Տապան ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»  
հասարակական կազմակերպության կողմից*

որ դիմումատու ընկերությունը կարող էր այն սպառած չլիներ: Եվ որևիցե կերպ դա չի նշանակում, որ ազգային դատարաններն անկարող կգտնվեին իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու, եթե դիմումատու ընկերությունը դիմեր նրանց:

Դատարանը հանգում է այն եզրակացության, որ դիմումատու ընկերությունը սպառած չի եղել իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները, ինչպես այդ պահանջվում է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով, եւ որ գանգատի այս մասը պետք է մերժել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

Վերը նշվածի հիման վրա՝

Դատարանը միաձայն

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Չետաձգել դիմումատու ընկերության բողոքների ուսումնասիրությունը՝ դիմումատու ընկերության փաստաբանին դատական նիստերի դահլիճից հեռացնելու եւ արտահայտվելու ազատության իրավունքի խախտման մասով:

Դիմումը մյուս բոլոր մասերով ճանաչել անընդունելի:

*Ջորջ Ռեսս,  
Նախագահող*

*Վինսենթ Բերժե,  
Քարտուղար*